 Յակոբ Ապահունի՝ »  
 Մանուկ Տէրոյեան՝ »  
 Տիգ. Մաքուր Գարբիէլեան՝ »

ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Տեարք՝ Գ. Դշխոյեան  
 Գ. Մ. Մատթէոսեան

ՈՒՆՍԱԲԷԹԻ ՄԱՍՆԱՃԻԴ

Հասցէ՝

A. Veznaian  
 33 Sayles St.  
 Woonsocket, R. I.

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Ա. Նուրիկեան՝ Ատենապետ  
 Ա. Վէդնէեան՝ Ատենադպիր  
 Մ. Մերիկեան՝ Գանձապետ  
 Յ. Մաղմանեան՝ Խորհրդականք  
 Ա. Տարազեան՝ Հաւաքիչ

## ՈՒԻՆՈՒՍՔԻԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

M. Hadjatian  
P. O. Box 62  
Winooski, Vt.

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեաքք Մ. Հաճաթեան՝ Ատենապետ  
Յ. Մերտինեան՝ Ատենաղաղիք  
Խ. Շեքերճեան՝ Գանձապահ  
Գ. Սարգիսեան՝ Հաւարիչ  
Ն. Մալաթեան՝ Հաշուեմանիչ

## ՈՒՍՏՐԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

M. G. Berberian  
78 Front St.,  
Worcester, Mass.

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Մաղաք Գ. Պէրպէրեան, Ատենապետ  
Գէորդ Պ. Թովմաճանեան, Փոխ-Ատենապետ  
Սեդրակ Տ. Պաղտասարեան, Ատենաղաղիք  
Տիգրան Էքմէքճեան, Փոխ-Ատենաղաղիք  
Յակոբ Երեցեան, Գանձապետ  
Կարապետ Պ. Թովմաճանեան Պորհրդական  
Մարտիրոս Տէրանեան »  
Տոբթ. Մ. Նաչիկեան »  
Գեղամ Միքրոյեան »

## ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲ

Յովակիմ Մանթարեան  
Կարապետ Թաչճեան  
Անդրանիկ Չաղարեան  
Մեսրոպ Գաղանճեան  
Գրիգոր Մընըխեան  
Յովհաննէս Եարմեան

## ՏԻԿՆԱՆՅ ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲ

Տիկին Թէնսիլ Երեցեան՝ Ատենապետ  
» Գոհար Մանթարեան Ատենաղաղիք  
» Աննա Մալխասեան Պորհրդական  
» Ազնիւ Տէր Պաղտասարեան »  
» Աննա Ճօրճօրեան »  
» Թէնսիֆ Ռափայէլեան »  
» Արմենուհի Էքմէքճեան »

## ՀԱՒԱՔԻՉՆԵՐ

Յովհաննէս Կօշկարեան  
Կարապետ Թաչճեան  
Յարէթ Թալանեան  
Հայկազ Մանթօեան

## ՈՒՕԹՐԹԱՌՈՒՆԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

Rev. V. Tamzarian  
186 Arlington St.  
Watertown, Mass.



## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Պատ. Խաչատուր Մինասեան Ա. պետ  
 Վեր. Վ. Թաճարեան, Ատենադպիր  
 Յակոբ Տէր Յովհաննէսեան, Գանձապետ  
 Պօղոս Եսայեան Ոորհրդական  
 Ս. Գալաֆեան, »  
 Ոսկան Մանուկեան »  
 Խաչիկ Տէր Յակոբեան »

## ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Տեարք՝ Ներսէս Սիւքիասեան  
 Ս. Սողոմոնեան:

## ՈՒՌԻՎԵՐՍԻՒՄ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

H. Mouradian  
 612 Cummings Ave.,  
 Waukegen, Ill.

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Յ. Մարգարեան՝ Ատենապետ  
 Յովհ. Մուրատեան՝ Ատենադպիր  
 Հաճի Կ. Թուրօեան՝ Գանձապետ

## ԿԱՆԱՆՅ ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Տիկնայք Բրարիոն Կօլիարեան՝ Ատենապետ  
 Վիքթորիա Թորիկեան՝ Ատենադպիր  
 Զարուհի Ռուբինեան՝ Գանձապետ

## ՉԱՐԼՍԹԱՌԻՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

John Dinjian  
 170 Main St.  
 Charlestown, Mass.

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Յիր. Թովմաճանեան, Ատենապետ  
 Յովհ. Տինճեան, Ատենադպիր  
 Սուրէն Տ. Պաղտասարեան, Գանձապետ  
 Կիրակոս Ճերանեան Ոորհրդական  
 Աղայիկ Ժամկոչեան «

## ՉԱՐԼՍԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

Aram Arsenian  
 66 Franklin Ave.  
 Chelsea, Mass.

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Պաղտասար Աճէմեան, Ատենապետ  
 Արամ Արսէնեան, Ատենադպիր  
 Պետրոս Պապանեան, Գանձապետ  
 Եղիա Սարգիսեան Ոորհրդական  
 Բարսեղ Վարդանեան »

ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲ

Տեարք՝ Արխոդակէս Պէլէքեան  
 Հրանդ Գալճեան  
 Սերոբ Տ. Յակոբեան  
 Պետրոս Եոզկաթեան:

ՊԱԹԻՄՈՒՐԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

Dr. H. V. Levonian  
 819 N. Howard St.  
 Baltimore, Md.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Յարութիւն իյաչատուրեան՝ Ա. պեա  
 Տոքթ. Յ. Վ. Լեւոնեան, Ատենադպիր  
 Եսայի Պահատուրեան, Գանձապետ:

ՊԻՆԿԷՄԹՐԸՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

A. Jughlian  
 337 Main St.,  
 Binghamton, N. Y.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք Վեր. Ս. Բէճէպեան՝ Ատենապետ  
 Արմենակ Գ. Ճըզըլեան՝ Ատենադպիր  
 Վարդան Քէչոեան՝ Գանձապետ  
 Յ. Մազմանեան՝ Խորհրդական  
 Յ. Գըրզեաշարեան՝ »

ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲ

Տեարք Վարդան Քէչոեան  
 Արեւ Մելիքեան

ՊՈՍԹՈՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

Dr. C. H. Calusdian  
 602 Tremont St.  
 Boston, Mass.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Տ. Կ. Յ. Գալուստեան՝ Ատենապետ  
 Ենովջ Զուլալեան, Փոխ-Ատենապետ  
 Յրթն. Պէրպէրեան, Ատենադպիր  
 Վահան Գալալճեան՝ Գանձապետ  
 Մարտիրոս Մաղմանեան Խորհրդական  
 Արբաշամ Պօղիկեան »  
 Յակոբ Պօյաճեան: »

ՊՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՍԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

H. Barkevia  
 Calle Aguirre No. 617  
 Buenos-Aires, Argentine

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Յովհաննէս Պարզեւեան, Ատենապետ  
 Ռուբէն Նալպանտեան, Փոխ-Ատենապետ  
 Հայկ Մոսկօֆեան, Ատենադպիր  
 Աղեքսանդր ձէնանեան, Փոխ-Ատենադպիր  
 Լեւոն Քէչէճեան՝ Գանձապետ:  
 Հայուեքնիիչ՝ Տ. Փանոս Շըզըրաւմեան:

ՊՐԱԲԹԸՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հասցէ՝

Dr. J. Alfred  
Brockton, Mass.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք Տթ. ձէյմս Ալֆրէտ՝ Ատենապետ  
Յ. Մանիկեան՝ փոխ-Ատենապետ  
Գ. Քէչիկէկեան՝ Ատենադպիր  
Խ. Ազնաւուրեան՝ Գանձապահ  
Բ. Պատմաճեան՝ Խորհրդական  
Ս. Չարդարեան՝ »

ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲ

Տեարք Գ. Քէչիկէկեան  
Յ. Ճանիկեան

ՊՐԻՃՈՒՕԹԸՐԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

The Armenian General  
Benevolent Union

234 P. O. Box  
Bridgewater, Mass.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Թորոս Պարոնեան՝ Ատենապետ  
Գուրգէն Պօղաճեան՝ փոխ-Ատենապետ  
Հայկ Սեղբոսեան՝ Ատենադպիր  
Յովհ. Պօղաճեան՝ փոխ-Ատենադպիր  
Խաչատուր Վարդապետեան՝ Գանձապետ :  
Ստեփան Բանեան : Հաշուէքներէ

ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲ

Տիկնայք՝ Թուրվանտա Տէփոյեան  
Մարիճա Վարդապետեան :

ՊՐԻՃՓՕՐԹԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

S. Dinjian  
1375 Central Ave.  
Bridgeport, Conn.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Հայրապետ Ճղնաւորեան՝ Ա. պետ  
Ստեփան Տինճեան՝ Ատենադպիր  
Մարգրիտ Նալպանտեան՝ Գանձապետ :  
Մկրտիչ Շինտանճեան Խորհրդական  
Յ. Պարութճեան : »

ՊՐՈՒԲՂԻՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

M. Kalfaian  
219 Livingston St.  
Brooklyn, N. Y.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Խորոյ Սարաֆեան՝ Ատենապետ  
Մարտուր Գալֆաեան՝ Ատենադպիր

Գարեգին Դաւիթեան՝ Գանձապետ  
Նէրսէս Նէրսէսեան՝ Խորհրդակաճք  
Հայկ Զավուչեան՝ »

ԳԱՆԶԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆԶՆԱՍՈՒՄԲ

Հէրի Դաւիթեան  
Յովհաննէս Պօսթանեան  
Մաքսուտ Գալֆաեան

ՍԱԼԷՄԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

134 1/2 Boston St.  
Salem, Mass.

ՎԱՐԶՈՒԹԻԻՆ

Տեարք՝ Մարտիրոս Կօչկարեան՝ Ատենապետ  
Յակոբ Կալուստեան՝ Ատենադպիր  
Յակոբ Սուրբառեան՝ Գանձապետ

ԳԱՆԶԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆԶՆԱՍՈՒՄԲ

Տեարք՝ Եղիա Կօչկարեան  
Պաղասար Օղկասեան

ՍԷԼՄԱՅԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

C. H. Malkasian  
R. A. Box 117  
Selma, Cal.

ՎԱՐԶՈՒԹԻԻՆ

Տեարք Պ. Պետրոսեան՝ Ատենապետ  
Զ. Յ. Մալխասեան՝ Ատենադպիր  
Ա. Զաքարեան՝ Գանձապետ  
Յ. Սէրեան՝ Խորհրդակաճք  
Մ. Աճէմեան՝ »

ՍԷՅՆԹ-ԼՈՒԻՉԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

(Նորակազմ)

Հասցէ՝

The Armenian General  
Benevolent Union  
2820 Washington Ave.  
St-Louis, Mo.

ՎԱՐԶՈՒԹԻԻՆ

Տեարք՝ Նարոլէոն Սանցեան՝ Ատենապետ  
Մարգիս Թէրզեան՝ Ատենադպիր  
Մեսրոպ Կարօեան՝ Գանձապետ,  
Տիկ. Հռիփսիմէ Թէրզեան՝ Խորհրդակաճք  
Տիգրան Տէր Մարտիրոսեան »

ՍԷՆԿԸՐԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

G. Krikorian  
P. O. Box 154  
Sanger, Cal.

## ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Արամ Յ. Զայէլեան՝ Ատենապետ  
Վարդան Յոփսէփեան՝ Իոթա-Ատենապետ  
Խոսրոփ Ս. Ռատիլեան՝ Ատենաղալիք  
Գառնիկ Գարբինեան՝ Իոթա-Ատենաղալիք  
Կարապետ Գրիգորեան՝ Գանձապետ  
Յակոբ Զայէլեան՝ Խորհրդականք  
Միհրան Զայէլեան՝ »

## ՍԸՄԸՐՎԻԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

N. Mangherian  
37 Porter St.  
Somerville, Mass.

## ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Գրիգոր Փարմաղեան՝ Ատենապետ  
Տիկ. Մարիամ Տէր Յովհաննէսեան՝  
Իոթա-Ատենապետ  
Նշան Մանկրեան՝ Ատենաղալիք  
Օր. Էլիզա Կիրակոսեան՝ Իոթա-Ատենաղալիք  
Կիրակոս Սարգիսեան՝ Գանձապետ :  
Յ. Դերձակեան : Խորհրդականք  
Սարգիս Աղամեան »

## ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Տիկնայք՝ Պայծառ Սարգիսեան  
Թադուհէ Էլմասեան  
Մարիամ Սարգիսեան

## ՍԹՈՆ ԶԷՄԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

A. Karakashian  
88 Elm St.  
Stoneham, Mass.

## ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Յարթ Գարազաչեան՝ Ատենապետ  
Սարգիս Մալխասեան՝ Իոթա-Ատենապետ  
Վահէ Գարազաչեան՝ Ատենաղալիք  
Լեւոն Գարբինեան՝ Իոթա-Ատենաղալիք  
Գրիգոր Մեղքոնեան՝ Գանձապետ  
Սերովբէ Էղիկեան՝ Խորհրդականք  
Արմենակ Յովնանեան՝ »

## ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Տեարք՝ Ս. Գալուստեան  
Ս. Մալխասեան

## ՍԻԷԹԸԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

M. Krikorian  
308 Galer St.  
Seattle, Wash.

## ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Ս. Պատասճեան՝ Ատենապետ  
Մեսրոպ Գրիգորեան՝ Ատենաղալիք,  
Գառնիկ Գեղապետեան՝ Գանձապետ :



Յ. Կիրակոսեան :  
Զաքար Գ. Լալանեան

Սորհրդական  
»

ՍԸՄԻՔԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

M. Odiakjian  
524 Morris Ave.  
Summit, N. Y.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Յ. Ղումբիկեան՝ Ատենապետ  
Մուրատ Օճազեան՝ Ատենադպիր  
Գէորգ Խնձորեան՝ Գանձապետ  
Յ. Գալստիսեան՝ Սորհրդական  
Մեսրոպ Քիւրքեան »

ՍԻՐԱՔԻՒՋԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

H. Azadian  
130 W. Colvin St.  
Syracuse, N. Y.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Յ. Ազատեան՝ Ատենապետ  
Սեդրակ Գալլազեան՝ Ատենադպիր  
Յ. Քէրբեան՝ Գանձապետ :

ՍՓՐԻՆԿՅԻԼՏԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

M. S. Emirzian  
778 State St.,  
Springfield, Mass.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Գ. Խաչատուրեան՝ Ատենապետ  
Կ. Պոյաճեան՝ փոխ-Ատենապետ  
Մ. Ս. Իմիրզեան՝ Ատենադպիր  
Յ. Էթերեան՝ փոխ-Ատենադպիր  
Կ. Գարակէօզեան՝ Գանձապետ

ԿԱՆԱՆՅ ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲ

Տիկնայք՝ Ա. Էթերեան՝ Ատենապետ  
Փ. Իմիրզեան՝ Ատենադպիր  
Մ. Խաչատուրեան՝ Գանձապետ

ՏԻԹՐՈՅԻԹԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

M. Sdamboulian  
449 Labelle Ave.  
Highland Park, Mich.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Տք. Կ. Պոյաճեան՝ Ատենապետ  
Կիրակոս Արողեան՝ փոխ-Ատենապետ  
Մհրտիչ Ստամպուլեան՝ Ատենադպիր

Գարեգին Պաղտատարեան՝ Գանձապետ  
 Մարուքէ՛ Նահիկեան՝ Խորհրդակալան  
 Աբամ Մկրտիչեան՝ »  
 Պետրոս Ճաֆարեան՝ »

ՏՈՐՉԵՍԹՐԻԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցե՛

T. K. Gazarian  
 110 State St.  
 Boston, Mass.

ՎԱՐՉՈՒԹԻԻՆ

Տեարք՝ Թ. Ղազարեան՝ Ատենապետ  
 Յ. Համբարձումեան՝ Ատենադպիր  
 Ա. Թահմիզեան՝ Գանձապետ  
 Լ. Պայեանց՝ Խորհրդակալան  
 Տ. Թօփճեան՝ »  
 Բ. Սեւեան՝ »  
 Յ. Ճուրիկեան՝ »

ԳԱՆՉԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ

Տ. Թօփճեան  
 Ն. Թօփճեան  
 Յ. Համբարձումեան  
 Ա. Յակոբեան  
 Յ. Պէղիբեան

ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ

Տիկ. Գ. Թահմիզեան՝ Ատենապետուհի  
 » Շ. Պայեանց՝ Ատենադպրուհի  
 » Ս. Սեւեան՝ Գանձապետ  
 » Ա. Ղազարեան  
 » Ս. Եռւյանեան  
 » Հ. Պետրոսեան  
 » Ե. Հաճեան՝

ՐԱԶԷՍԹՐԻԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցե՛

A. Balarian  
 13 So. Union St.  
 Rochester, N. Y.

Տեարք՝ Նասիպ Տէլէրեան՝ Ատենապետ,  
 Նշան Նալպանտեան՝ Ատենադպիր  
 Աբամ Պալլարեան՝ Գանձապետ  
 Յակոբ Գույումճեան՝ Խորհրդակալան  
 Նշան Գասապեան՝ »

ՐԻՉՄԸՆՏԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցե՛

The Armenian General  
 Benevolent Union  
 M. Kambourian  
 15 W. Grace St.  
 Richmond, Va.

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Մ. Գամպուրեան՝ Ատենապետ  
 Հ. Գասապեան՝ Ատենաղալիբ  
 Ն. Ժամկոչեան՝ Գանձապետ

ՐԻՎԷՐԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

M. M. Kondazian  
 112 Sowmut Ave.  
 Boston, Mass.

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Խաչիկ Զորլեան՝ Ատենապետ  
 Միհրան Մ. Գոնտաղեան՝ Ատենաղալիբ  
 Պետրոս Ճիմճիմեան՝ Գանձապետ  
 Մինաս Ս. Գոնտաղեան : Խորհրդակից

ԿԱՆԱՆՅ ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

Տիկնայք՝ Մ. Ս. Գոնտաղեան՝ Ատենապետ  
 Խ. Զորլեան՝ Ատենաղալիբ  
 Պ. Ճիմճիմեան՝ Գանձապետ

ՐԻՏԼԻԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

M. G. Hagopian  
 R. A. Box 135  
 Reedly, Cal.

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Յակոբ Յովսէփեան՝ Ատենապետ  
 Կարապետ Զանդալեան՝ փոխ-Ատենապետ  
 Միսաք Տէր Յակոբեան՝ Ատենաղալիբ  
 Արմենակ Պողոսեան՝ փոխ-Ատենաղալիբ  
 Պետրոս Մուսուլեան՝ Գանձապետ  
 Թովմաս Թէճիրեան՝ Խորհրդակից  
 Սարգիս Սրապեան՝ »

ՓԱՐԼԻԻՐԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

M. M. Ayvazian  
 P. O. Box 45

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Փօլ Վարդանեան՝ Ատենապետ  
 Միհրան Այվազեան՝ Ատենաղալիբ  
 Գրիգոր Մուշեղեան՝ Գանձապետ  
 Մինաս Արուսեան՝ Խորհրդակից  
 Անարոն Այվազեան՝ »

ՓԷԹԸՐՍԸՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

The Armenian Gen. Ben. Union  
 480 Main St.  
 Paterson, N. Y.

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Հրանդ Սասունեան՝ Ատենապետ  
 Վահան Մասճեան՝ Ատենաղալիբ  
 Միհրան Նուրիկեան՝ Գանձապետ  
 Թուխման Գաղալեան՝ փոխ-դանձապետ  
 Սարգիս Պալաֆեան՝ Ոորհրդակալ  
 Եղիշէ Չէրչեան՝ Հաշուեքներչ

## ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Օր. Ռոզի Հաննուչ՝ Ատենապետ  
 Օր. Մէրի Թըրքմանեան՝ Ատենաղալիբ  
 Տիկին Ֆենի Տիշեան՝ Գանձապետ  
 Տիկին Օլոպիա Սաաթճեան՝ Ոորհրդակալ  
 Օր. Աննա Կէմէրէկեան՝ »

## ԿԱՆԱՆՅ ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Տիկնայք՝ Էլմաս Կէմէրէքեան՝ Ատենապետ  
 Բրարիոն Կէմէրէքեան՝ Ատենաղալիբ  
 Մ. Հօփէլեան՝ Գանձապետ  
 Ռ. Կարպուշեան՝ Ոորհրդակալ  
 Օր. Ս. Մասճեան՝ »

## ՓԻՊԱՏԻԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

Dr. P. Manoukian  
 65 Main St.  
 Peabody, Mass.

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Տք. Բ. Մանուկեան՝ Ատենապետ  
 Պաղտասար Մարտուպեան՝ փոխ-Ատենապետ  
 Պետրոս Ղուկասեան՝ Ատենաղալիբ  
 Վարդան Առաքելեան՝ Գանձապետ  
 Գրիգոր Նազիկեան՝ Ոորհրդակալ

## ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Տեարք՝ Յարութիւն Սարգիսեան  
 Սաշատուր Արօեան

## ՓՈՐԹԻԿԵՆՏԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

M. Dinikian  
 135—10th St.  
 Portland, O.

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք Յ. Գարթօղեան՝ Ատենապետ  
 Մկրտիչ Տիմիհանեան՝ Ատենաղալիբ  
 Թաթէոս Գարթօղեան՝ Գանձապետ

ՓՐԱՎԻՏԷՆՍԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

Dr. A. Aharonian  
509 Westminister St.  
Providence, R. I.

ՎԱՐՁՈՒԹԻԻՆ

Տեարք՝ Նիկողոս Խաչմանեան՝ Ատենապետ  
Յ. Պէյլէրեան՝ Իոթ-Ատենապետ  
Տք. Ահարոն Ահարոնեան՝ Ատենադպիր  
Նշան Ասատուրեան՝ Իոթ-Ատենադպիր  
Մովսէս Նահիկեան՝ Գանձապետ  
Յ. Կարապետեան՝ Հաշուապահ  
Տք. Խաչատուր Ս. Իմիրզեան՝ Խորհրդական

ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԲ

Տեարք՝ Պետրոս Ճապալեան՝ Ատենապետ  
Յ. Գրիգորեան՝ Իոթ-Ատենապետ  
Գրիգոր Տիւլիէրեան՝ Ատենադպիր  
Կ. Կարապետեան Իոթ-Ատենադպիր  
Մարտիրոս Բրուտեան՝ Գանձապետ

ՓՈՒԹԱԲԷԹ-ՍԷՆԹՐԷՂ ԾՕՂՍԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

H. Yessaian  
100 Park St.  
Pawtucket, R. I.

ՎԱՐՁՈՒԹԻԻՆ

Տեարք՝ Տք. Ա. Մէրտինեան՝ Ատենապետ  
Մկրտիչ Նաճարեան՝ Իոթ-Ատենապետ  
Խաչատուր Եսայեան՝ Ատենադպիր  
Յովհ. Ռահմեան՝ Գանձապետ  
Սահակ Էնկեյեան՝ Խորհրդական  
Վարդան Արսէնեան՝ Հաշուեքննիչ

ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԲ

Տեարք՝ Ահարոն Էլմասեան  
Գալուստ Յովհաննէսեան  
Նիկողոս Մ. Պողոսեան:

ԲԷՅՄՊՐԻՃԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

B. S. Jimjikian  
c/o Independent Wood Co.  
E. Cambridge, Mass.

ՎԱՐՁՈՒԹԻԻՆ

Տեարք՝ Ճիմճիմեան Պ. Ատենապետ  
Գանիէլեան Գ. Ատենադպիր  
Պողոսեան Ա. Գանձապետ  
Խալընեան Գ. Խորհրդական  
Հալաճեան Թ. »



ՔԻՆԿԶՊԸՐԿԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

S. A. Hussian  
R. K. B. Box 151  
Kingsbury, Cal.

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Դաւիթ Սէֆէրճեան՝ Ատենապետ  
Յարութիւն Ասլանեան՝ փոխ-Ատենապետ  
Մրիբիտոն Հիւսեան՝ Ատենաղալիբ  
Մուրատ Մուրատեան՝ փոխ-Ատենաղալիբ  
Տրդատ Վարդապետեան՝ Գանձապետ

ՔԼԻՎԼԷՆՏԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

H. Boyajian  
1207 E. 19th St.

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Տրք՝ Սարգիս Տէր Դաւիթեան՝ Ատենապետ  
Յովհ. Թարխանեան՝ փոխ-Ատենապետ  
Յ. Կ. Պօյաճեան՝ Ատենաղալիբ  
Յովհ. Թէրզի Եաղուպեան՝ փոխ-Ա.ղալիբ  
Յարէթ Գարօղլանեան՝ Գանձապետ  
Յովհ. Զէքէճեան՝  
Մինաս Կէօճեան՝ Խորհրդական

ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Տեարք՝ Տիգրան Գալուստեան  
Յովհ. Զէքէճեան  
Մինաս Կէօճեան  
Յարէթ Գարօղլանեան

ՖԱՈՒԼԸՐԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

G. H. Gasbarian  
Fowler, Cal.

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Մ. Պաղալեան՝ Ատենապետ  
Գ. Գասպարեան՝ Ատենաղալիբ  
Յ. Էլմասեան՝ Գանձապետ  
Մ. Համբարձումեան՝ Խորհրդական  
Պ. Տէրտէրեան՝ »

ՖԻԼԱՏԷԻՖԻԱՅԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

K. A. Tatarian  
3133 Kensington Ave.  
Philadelphia, Pa.

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Կարապետ Շահինեան՝ Ատենապետ  
Տք. Վասմ Նէտիւրեան՝ փոխ-Ատենապետ  
Գրիգոր Ա. Թաթարեան՝ Ատենաղալիբ  
Ն. Մխիթարեան՝ փոխ-Ատենաղալիբ

Յովհ. Թաշճեան՝ Խորհրդական  
Տ. Տիրատուրեան՝ Հաշուեքներէ

ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

Տեարք՝ Յովհ. Թաշճեան  
Ա. Քէսդէկեան  
Տ. Տիրատուրեան

ԿԱՆԱՆՅ ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

Տիկնայք՝ Գապագճեան՝ Ատենապետ  
Արմէն Եօրդանճեան՝ Ատենադպիր  
Օր. Ե. Գլըճեան՝ Գանձապետ

Ֆիզիկոսի ՄԱՍՆԱՃԻԻՂ

Հասցէ՝

The Armenian General  
Ben. Union

257 P. O. Box

Fitchburg, Mass.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Յովհ. Պէղիբկէնեան՝ Ատենապետ  
Յարթ. Եսփշեան՝ Ատենադպիր  
Փիլիպպոս Չիրաքեան՝ Ժողով-Ատենադպիր  
Վահան Իկիտպաչեան՝ Գանձապետ  
Տիրան Ուղունեան՝ Խորհրդական  
Յ. Պէղիբկանեան՝ Հաշուեքներէ

ԳԱՆՁԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

Տեարք՝ Փիլիպպոս Չիրաքեան  
Արսէն Հայրիկեան

Ֆիզիկոսի ՄԱՍՆԱՃԻԻՂ  
Հասցէ՝

The Armenian Gen. Ben. Union  
1942 Kern St.  
Fresno, Cal.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Յակոբ Մ. Նշկեան՝ Ատենապետ  
Վեր. Մանասէ Կ. Փափաղեան Ժողով-Ատ. պետ  
Տք. Վահան Գ. Թաշճեան՝ Ատենադպիր  
Երուանդ Արծրունի Ժողով-Ատենադպիր  
Մկրտիչ Սօլիկեան՝ Գանձապետ  
Մովսէս Աւաղեան՝ օգն. Գանձապետ  
Տք. Արրահամ Ծահպաղեան՝ Խորհրդական  
Մամբրէ Գորղմաղեան »  
Կարապետ Ալշուճեան »

ԿԱՆԱՆՅ ՕԺԻ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

Տիկ. Պէյաթրիս Նշկեան  
» Չարուհի Սօլիկեան  
» Էլմաս Ռստիկեան  
» Հայկուհի Մահակեան  
» Եսթեր Յովսէփեան

ՅՐԷՆՔԼԻՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հասցէ՝

N. Varjabedian

11 McCarthy St.

Franklin, Mass.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տեարք՝ Ս. Մարտիրոսեան՝ Ատենապետ  
ՏԿՆ. Ն. Վարժապետեան՝ Ատենադպիր  
Ղ. Պիլէպէրեան՝ Գանձապետ



ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԿՈՉ ՄԸ

Հայե՛ր,

Միօնի բարձունքներէն կ'ուզղեմ ձեզ անդրանիկ եւ յոյժ անկեղծ ողջոյնս, աստուածային մեծ գոհարեքեքեքեքեք վկայ այդ լեռնէն՝ որ եղաւ նաեւ խորհրդանշանը ամէն յոյսերու:

Ինչպէս յայտնի է ձեզի, երբ քանի մը օր առաջ ձեզմէ բաժնուեցայ՝ պաշտօն ունէի թառասունի չափ որբեր խնամելու թայց մինչ ես կը կարծէի թէ՝ կոչուած էի փոքրիկ արտ մը միայն մշակելու, Տէրը այլապէս տնօրինած էր իմ գործս: Եւ այդ գործը ինծի ա՛յնքան մեծ երեւցաւ որ երբեք չպիտի համարձակէի անոր ձեռնարկելու՝ եթէ վստահ չըլլայի թէ ինծի թեւ թիկունք պիտի ըլլաք ձեր օժանդակութեամբը, ձեր կամֆովը եւ ձեր հաւատֆովը:

Հայե՛ր,

Ձեր ամէնքին է որ այս կոչը կ'ուզղեմ: Ո՛վ որ ալ ըլլաք, ու՛ր որ ալ ըլլաք՝ մտիկ ըրէք ինծի:

Գործելու ժամը հնչած է: Մի խնայէք ձեր քանքերը, ձեր սիրտը, ձեր դրամը:

Ձեռքերնիդ երկնցուցէք ամէնքն ալ եւ ձեր սիրտերով շքանակ մը յօրինեցէք սա գոյգ մը բառերուն «Մե՛ր ՈՐԲԵՐԸ»:

Ձեր փութկոտութեամբը եւ սուտածե-  
նութեամբը մեզի ի վիճակի դրե՛ք զանուն  
փրկելու՝ կարելի եղածին չափ մեծ քուով:

Ամեն կողմէ ծայր կուտան այս հե՛ք որ-  
բերը: Կարծես ծովու մակնքացութիւնն է որ  
կը մտնե՛նայ եւ առաջին ալիքները արդէն իսկ  
մեր ստե՛նբուն կը բաղխին: Անոնք ամէն կող-  
մէ իրենց ձեռքերը մեզի կ'երկերեն եւ՝ մեր  
օգնութիւնը կը հայցեն յանուն այն դիւցազ-  
նական հաստատամտութեան որով իրենց  
ծնողները տառապեցան եւ մեռան Հայաստա-  
նի պատուին, անունին եւ Հայաստանեայց  
եկեղեցիին համար:

Հիմա հարիւրաւոր որբեր կան Երուսա-  
ղէմի մէջ, որոնք ո՛չ հայրիկ ունին, ո՛չ մայրիկ,  
ո՛չ պաշտպան, ո՛չ տանիք, այլ միայն  
վստահութիւն ձեր վրայ...:

Փութացե՛՛ք փրկել վաղուան սերունդը  
Հայե՛ր:

ԱՍՏԵՂԱՅԵՌ ԴՐՕՇԱԿՆ

Star Spangled Banner

Ըսէ՛՛ք. կրնա՞ք դուք դեռ տեսնել վաղապիտան  
Ձայն զոր երէկ ողջունեցինք մենք պանծա-  
նօք

Մեր պահպանման բերդին վրայ դոռ մարտին  
մէջ.

Աստեղայեռ Դըրօշն շերտեայ շքեղածալ,

Փամփուշտներուն և ուժերերուն կարմիր բո-  
ցերն

Կը ցուցնէին դիշերուան մէջ թէ դրօշն հոն էր  
Ո՛հ. ըսէ՛ք ինձ կը ծածանի՞՞ դեռ աստեղայեռն  
Հայրենիքին, և՛ երկրին վրայ ազատներուն:  
Ո՛հ. այդպէս միշտ երբ քաջարիք կը կանդ-

նին յաղթ  
Հայրենաւեր ընդ մէջ մարտին ու սիրելեաց  
եւ հայրենիքն իր երկնատուր ազատութեամբ  
Թող օրհնէ՛ միշտ զԱստուած կազմողն և՛ ազ-

դին պահողն  
Յաղթանակենք պիտի մենք յար երբ դասն  
արդար եւ ունինք մենք նշանաբան «Աստ-

ուած ընդ մեզ»  
Աստեղայեռն թող ծածանի յաղթանակով  
Հայրենիքին, և՛ երկրին վըրայ ազատնե-

րուն:  
Թարգմ. Կ. Մ. ՄԱՆԱՎԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐԸ  
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍԱՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

1492ին Գրիստափոր Գոլըմպոս անուն  
Իտալացին Սպանիայէն Ալբանտեանի ճամ-  
բով նաւարկեց դէպ Արեւմուտք, այն համո-  
զումով թէ աշխարհը կը լոր է եւ թէ դէպ Ա-  
րեւմուտք ճամբորդելով կրնայ Ասիա ժա-



մաննէ: Վեց շաբաթ իր ճամբան շարունակե-  
լէ վերջ գտաւ Ամերիկա:

Առաջին Գաղղթականները.— Քոլըմպըս  
հազիւ պատմած էր Եւրոպայի՝ այս նոր աշ-  
խարհի, Ամերիկայի, գտնմանով պատմու-  
թիւնը, երբ շատ մը ազգեր զաղթականներ  
զբնակեցին հոն: Սպանիական, Ֆրանսական եւ  
Անգլիական քաղաքացիներ թողուցին Եւրո-  
պիոյ իրենց հին բնակավայրերը եւ հաս-  
տատուեցան Ամերիկա: Ուրիշ ազգերէ վաղ-  
թականներ տակաւ հետեւեցան ասոնց: Մին-  
չեւ 1775 մօտ 300 տարի, շարունակեց այս-  
պէս, եւ 3,000,000 ժողովուրդ բնակեցաւ  
Արլանդեանի եզերքը: Կարգ մը պատերազմ-  
ներէ վերջ, Անգլիա զբաւեց զբեթէ Հիւս. Ա-  
մերիկայի ամբողջութիւնը եւ 13 գաղթա-  
կանութիւններ հաստատեց Արլանդեանի  
շուրջը:

Անկախութեան Պատերազմը.— Այս գաղ-  
թականութիւնները կը կառավարուէին Անգ-  
լիոյ թագաւորին կողմէ զրկուած պաշտօն-  
եաներով: Բայց թագաւորին եւ պաշտօնեա-  
ներուն հաստատած կարգ մը օրէնքները այն-  
քան անարդար էին որ գաղթականները վերջ  
ի վերջոյ մերժեցին հնազանդիւ անոնց: Եւր-  
կարատեւ պատերազմէ մը վերջ գաղութնե-  
րը ստիպեցին Անգլիա իրենց ազատութիւն  
տալու: Գաղութներու առջնակարգ մար-  
դոցմէ ոմանք ստորագրեցին բանաձեւ մը  
որով գաղթականութիւնները ազատ կը հըռ-  
չակէին: Այս կոչուեցաւ Անկախութեան Հըռ-

չակումը: Ստորագրութեան այդ թուակա-  
նը—Յուլիս 4—կը յիշատակուի իբրեւ ազգա-  
յին ամենամեծ տօնը:

Նոր Կառավարութիւնը.—1789ին ամե-  
րիկեան ազգային կեանքը սկսաւ նոր Սահ-  
մանադրութեան ներքեւ: Ճօրճ Ուաշինկթըն  
որ հրամայեց ամերիկեան բանակներուն յե-  
ղափոխութեան շրջանին, եղաւ առաջին Նա-  
խագահը, եւ երկու շրջաններ յաջորդարար  
ծառայելէ վերջ՝ քաջուեցաւ նախագահական  
թեկնածուութենէ: Անոր այս ընթացքը օ-  
րինակ մը եղաւ, յորմէ հետէ ո՛չ մի նախա-  
գահ ծառայած է աւելի քան երկու շրջան:

Ազգին Անումը.—Մեծապէս աճած է ան  
թէ՛ տարածութեամբ եւ թէ՛ բնակչութեամբ:  
1803ին Ֆրանսայէն ընդարձակ երկրամաս մը  
ծախու առնուեցաւ, որ կը կոչուի «Լուիզիա-  
նայի Գնում», եւ իր մէջ կը բովանդակէ Մի-  
սիսիպի Գետին Արեւմտեան կողմը դանուող  
երկրին մեծ մասը: Ուրիշ հողամասեր ալ  
ձեռք բերուեցան Ֆլորիտայի եւ Ալաբայի  
գնումով: Իսկ Գալիֆորնիոյ, Նոր Մեքսի-  
քոյի եւ Արիզոնայի վիճակները զբաւուեցան  
Մեքսիքոյի դէմ մղուած պատերազմէ մը  
վերջ: Ետտ մը ակնաւոր ամերիկացիներ  
Մէքսիքոյի հետ եղած պայտերազմին չեն  
հաւանիր, պնդելով թէ Մ. Նահանգաց Կա-  
ռավարութիւնը իրաւունք չունէր ուրիշ երկ-  
րի մը հողերը անոր ձեռքէն կորզելու: Զուտ  
աշխարհակալական ձգտումներով մղուած



պատերազմներու վրայ աշխարհը ո՛չ եւս կը դնէ իր հաւանութեան դրոշմը:

Քաղաքական Պատերազմը.— Գերեվաբուրու թեան շուրջ հիւսիսային եւ հարաւային նահանգներուն միջեւ տեղի ունեցող վէճը տեղի տուաւ Քաղաքային Պատերազմին, որ մէկ խոյս տալու համար երկու կողմի մեծահոգի անձնատրութիւնները ամէն ջանք թափեցին ամբողջ քսան տարի: Բայց ի զուր: 1860ին Արբահամ Լինքընի նախադաշութեան ընտրուելէն վերջ՝ հարաւային նահանգները քաշուեցան Միութեանէն եւ իրենց ուրոյն կառավարութիւնը կազմեցին: Երկարատեւ պատերազմէ մը վերջ յաղթութիւնը մնաց հիւսիսայիններուն:

Արբահամ Լինքըն, որ շատերու կողմէ նկատուած է իրբեւ մեծագոյն ամերիկացիին որ երբեք ապրած ըլլայ, ամբողջ պայքարի միջոցին առաջնորդեց Հիւսիսը մեծ իմաստութեամբ եւ զօրութեամբ: 1865ին, պատերազմի տեւողութեան միջոցին, զերեվաբուրութիւնը խափանեց զերկոց ազատութիւն հռչակելով: Այս Մեծ Մարզը սակայն յետ պատերազմի զնդակահարուեցաւ ոճրագործի մը կողմէ մինչ հանդիսատես կը գտնուէր ներկայացումի մը:

Քաղաքական Պատերազմէն վերջ.— Հիւսիսային եւ հարաւային նահանգները այլեւս իսպառ մոռցած իրենց տարբերութիւնները

եւ ձեռք ձեռքի՝ նուիրուած են երկիրը զարգացնելու մեծ գործին: Հազարաւոր մղոն երկաթուղիի դժեր ձգած են երկրին ամէն կողմը, մեծ քաղաքներ ծաղկած են. աշխարհի չորս ծայրերէն զաղթականներ եկած են Միացեալ Նահանգները եւ եղած են պատուական եւ հաւատարիմ քաղաքացիներ:

1898ին Սպանիոյ հետ կարճ պատերազմէ մը ետք Մ. Նահանգաց կառավարութիւնը դնեց Փիլիպին կղզիները եւ Գուալայի մէջ հաստատեց ազատ եւ անկախ կառավարութիւն մը:

1917 Ապրիլ 4ին՝ Ամերիկա միացաւ Դաշնակիցներուն ընդդէմ կեդրոնական Պետութեանց՝ իր դրամը՝ իր վարկը եւ իր միլիոնաւոր զաւակները ի սպաս դրաւ «ապահովելու աշխարհը վասն ռամկավարութեան»: Անոր զոհողութեան, արդարութեան եւ փոքր ազգերու իրաւանց պաշտպան եւ անկողմնակալ ողբին՝ աշխարհի հիացման եւ յարգանքին արժանի ընձայած է զինքը:



## ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՒՆ

## ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ

## ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մ. Նահանգաց քաղաքացիները ունին շատ մը իրաւունքներ, զոր ոչ իսկ կառավարութիւնը կրնայ կորզել անոնցմէ: Այս իրաւունքները ապահովուած են թէ՛ ազգային եւ թէ՛ նահանգային սահմանադրութիւններով:

## ԿԱՐԳ ՄԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ

Ազատ ըլլալու իրաւունքը.— Գերութիւնը միանգամ ընդ միշտ ջնջուած է Սահմանադրութեան 13րդ յաւելուածական յօդուածով, յետ Քաղաքական Պատերազմին որդեգրուած:

Կրօնական Ազատութիւն.— Կատարելապէս ազատ է ամէն ոք իր ուզած կերպով երկրպագութիւն ընելու, պայմանաւ որ պաշտամունքի ձեւը ապօրինի ոչլինչ ունենայ իր մէջ:

Խօսքի եւ Մամուլի Ազատութիւն.— Քաղաքացի մը ազատ է թէ՛ բեմով եւ թէ՛ դրբով արտայայտելու իր զաղափարները անհարգել, պայմանաւ որ անոնք ուրիշները անիրաւոյ հանդամանք չ'ունենան եւ զանոնք չ'մղեն օրէնքին դէմ ըմբոստանալու:

Ժողով Գումարելու եւ Բողոքելու իրաւունք.— Ժողովուրդը կրնայ հաւաքուել եւ վիճիլ իր գործերու մասին եթէ այսպիսի գումարումներ խաղաղութիւնը չեն վրդովեր: Ան կրնայ նաեւ աղերսարկել կառավարութեան եւ իր բողոքը լսելի ընել տալ իր հանրային պաշտօնէից:

Ծանր Յանցանքով Ամբաստանութեան Պարագայիմ՝ անչառ քննութեան իրաւունք, որ կը պարունակէ արագ եւ հրապարակային դատավարութիւն, Երգուեալներու Դատաստան եւ Բանտէն արձակուելու հրամանագիր մը (a Writ of Habeas Corpus): Այս վերջինը կարգիլէ բանտարկել առանց դատավարութեան:

Քուէարկելու եւ Պաշտօնավարելու իրաւունք.— Ասոնք վերեւ յիշուածներուն պէս ընդհանրական իրաւունքներ չեն, բայց կը տրուին քաղաքացիներու եւ չափահասներու: Շատ մը նահանգաց մէջ կիներն ալ կը վայելեն այս իրաւունքները:

## ԿԱՐԳ ՄԸ ՀԻՄՆԱԿԱՆ

## ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Յիշեալ իրաւունքներէն շատերը ձեռք բերուած են մեծամեծ գոհողութիւններով միայն: Անոնց գոյութիւնը այսօր եւս կախուած է քաղաքացիներու մեծամասնութեան

անչահանդրութենէն եւ քաջարտութենէն: Առանց պարտականութեան իրաւունք գոյութիւն չկրնար ունենալ: Եթէ կայրինք կառավարութեան մը տակ որ իրաւունքներ կը շնորհէ մեզի, մենք ալ փոխարէն հաւատարմութիւն եւ ծառայութիւն կը պարտինք անոր: Կառավարութիւն մը զօրաւոր եւ տեւական կրնայ ըլլալ միայն այն ատեն երբ անոր քաղաքացիները յօժար են իրենց պարտքը կատարել լիովին: Քաղաքացիի մը պարտքերը կարելի չէ ճշգրտօրէն սահմանել, պէտք է անոր խիղճը ըլլայ իր վերջին դատաւորը:

Այսու հանդերձ կան կարգ մը ահնայտնի եւ հիմնական պարտականութիւններ, ինչպէս Հնազանդութիւն Օրէնքի: Եթէ օրէնք մը նպատակաւորօրէն չէ, ժողովուրդը իրաւունք ունի քուէարկելու անոր խափանումը եւ խնդրելու իր օրէնսդիրներէն որ յետս կոչեն զայն: Սակայն որքան ատեն քաղաքացիներու մեծամասնութիւնը կը թուլատրէ զայն ժողովուրդն ալ պարտի հնազանդիլ անոր: Օրէնքին հնազանդելով պարզապէս հնազանդած կըլլանք քաղաքացիներու մեծամասնութեան:

Օրէնքի Գործադրութեան մէջ օժանդակելու պարտականութիւնը: Ամէն քաղաքացի կրնայ օգնել կառավարութեան օրէնքը գործադրելու մէջ, կրնայ մաքուր պահել իր բռնակարանին շուրջը, բարելաւելով իր քաղաքին երեւութիւնը, բարեգարգելով իր տու-

ներն ու բակը: Շատ մը կերպերով մէկը որ ուրիշի մը ձեռնընտու կըլլայ՝ այդպիսին քաղաքացիական ամենակարեւոր պարտականութիւնները կատարած կըլլայ:

Խելամտութեամբ բուէարկելու պարտականութիւն: Ամէն քաղաքացի որ կրնայ քուէարկել պարտի գործածել այս իրաւունքը ամէն նախնական եւ վերջնական ընտրութեանց առթիւ, եւ գործածել զայն խելամտութեամբ: Փոխանակ ուրիշէ մը ստանալու քուէի եւ ինչպէս գործածելու իրաւունքը, ինք անձամբ պարտի սորվել, քաղաքական ժողովներու յաճախելով, մէկէ աւելի թերթեր կարդալով, եւ բոլոր կողմերու փաստերը լսելէ վերջ քուէարկել անկախաբար:

Պատերազմի միջոցին կառավարութեան օգնելու պարտականութիւնը: Ընդդէմ Գերմանիոյ ներկայ պատերազմին մէջ շատ մը միջոցներ կան որոնցմով ամէն որ կրնայ ծառայութիւն մը մատուցանել, ոմանք բանակին կամ նաւատորմիդին մասնակցելով, ոմանք՝ եթէ տուն մնալու կանչուած են՝ կըրնան իրենց կարողութեան մեծագոյն չափով Ազատութեան Տոմսեր գնելով, տալով Կարմիր Ոստիկան եւ այլ արժէքաւոր նպատակներու: Այսպիսիք կրնան օժանդակել կառավարութեան նաեւ հողիով ու սրտով: Կրնան Մ. Նահանգաց նպատակները սորվել եւ սպասել անոնց որոնք չեն կրնար կարգալ



կամ՝ առիթը չեն ունեցած սորվելու: Ամէն ոք պարտի «իր բաժինը կատարել» Ամերիկայի համար:

### ՇԱՀԵԿԱՆ ՆՕԹԵՐ

Քոնվէյ Ամերիկացիին ամէնէն արագախօսն է: Ժամը 65,000 եւ երկվայրիկեանը 80 բառ կարտասանէ: Սա կը պնդէ թէ ոչ մէկ սղագիր կարող է իր խօսածը սղագրել: Ո՛չ լեզուն, ո՛չ ծնօտը եւ ո՛չ ձայնը սեւէ կ'երպով կ'ազդուին իր արագախօսութեանն: Աստուած կարողութիւն տայ անոր որ խօքի կը բռնուի Քոնվէյներու հետ:

### Մ. ՆԱՀԱՆԳԱՅ ԻՆԸ ՆՇԱՆԱՒՈՐ

#### ԱՂՔԱՏՆԵՐԸ

Ճան Տ. Բաբիֆէլըր ունի	\$1,000,000,000
Էնտրիւ Գառնէլի ունի	500,000,000
Ճ. Փ. Մօրկըն ունի	500,000,000
Ուիլեէմ Բաբիֆէլըր ունի	250,000,000
Ճ. Ֆ. Պէյբըր ունի	250,000,000
Ճէյմս Պ. Տիւք ունի	200,000,000
Ճէյմս Մթիլմէն ունի	200,000,000
Հէնրի Ֆրիք ունի	150,000,000
Ու. Ք. Վէնտէրպիլթ ունի	150,000,000

Մեծ անձկութեան մէջ են այս խեղճերը իրենց օրապահիկը ճարելու մասին...:

\*\*\*

Վերջին 10 տարիներու ընթացքին Միացեալ Նահանգաց մէջ եկեղեցւոյ անդամներու թիւը 7,000,000 աւելցած է, կամ 35,000,000 էն բարձրացած է 42 միլիոնի: Ասոնց 26,000,000ը բողոքական են, իսկ 16,000,000ը կաթոլիկ:

\*\*\*

Այս երկրին մէջ 201 այլևայլ կրօնական աղանդներ եւ յարանուանութիւններ կան, որոնց 13ը վերջին 10 տարիներու միջոցին ծաղում առած են: Եկեղեցիներու թիւը 228,007 է, որոնց 15,777ը դարձեալ վերջին 10 տարիներու ընթացքին կառուցուած են: Այլ եկեղեցիները ունին 191,722 եկեղեցականներ, ինչ որ կը ցուցնէ թէ 36,285 եկեղեցիներ մնալուն պաշտօնեայ չունին եւ միայն այցելու եկեղեցականներու եւ կամ աշխարհականներու հոգածութեան կ'ապաւինին:

\*\*\*

Վատնում.— Կառավարութիւնը ստուգած է որ մէկ թօնօ աւելցուցնելու (Garbage) մէջ 14 մեծ թնդանօթի ուռմերու բաւական կլիսերին, ութը Պուչըլ ցորեն արտադրելու բաւական զօրացուցիչ աղբ (Fertilizer) եւ 70 ֆաունտ օճառ շինելու բաւական ճարպ կայ:

Այս թիւերը խիստ ուշադրաւ կը դառնան երբ հաշուի առնենք մեծ քաղաքներու

աւելցնւքներու ահադին զանգուածը, որ առհասարակ չի շահագործուիր: Միացեալ Նահանգաց 24 մեծադոյն քաղաքներու աւելցուքը կրնար տարեկան 4,000,000 Փառւնտ նայթրօ-կլիսէրին, 40,000,000 կտոր օճառ եւ 3,000,000 Պուշըլ ցորեն արտադրելու բաւական զօրացուցիչ աղբ արտադրել:

Ուրիշ հաշիւով իւրաքանչիւր 5,000,000 բնակչութիւն մօտաւորապէս \$5,000,000 արժողութեամբ օգտակար նիւթեր կը վառնէ:

Այդ աւելցուքները բնականաբար կը բնան շահագործուելի պատշաճ գործարաններու միջոցով:

Յարդ ամէնէն զիւրին շահագործելու կերպը անոնցմով խողեր սնուցանելը նկատուած է: Այս երկրին մէջ 300 քաղաքներ այդ մէթոտը որդեգրած են, որու արդիւնքը կ'ըլլայ 52,000,000 փառւնտ խողի միս եւ իւղ: Դիչ մը աւելի խնամք այդ արդիւնքը կրնայ զիւրաւ կրկնապատկել:

Պօսթին քաղաքը իր կոյուղիներուն աղբը կը շահագործէ եւ իւրաքանչիւր 20 տոնլար ծախսի փոխարէն 91 տոլար արդիւնք կ'ստանայ:

\*\*\*

Օտարագրիներ Ամերիկայի մէջ.— Այս երկրին 100 միլիոն բնակչութեան 15 միլիոնը օտարածին են եւ 20 միլիոնը օտարածին ծընողաց զաւակ: Այդ 35 միլիոն օտարականները գլխաւորաբար 30 տարրեր ազգեր եւ

լեզուներ կը ներկայացնեն, առանց նկատի առնելու այն ազգերը եւ ցեղերը որոնք միայն փոքր եւ աննշան թիւով կը ներկայանան: Կառավարութիւնը վերջերս կարեւոր ձեռնարկներ կ'ընէ այդ զանազան տարրերը աւելի սերտիւ իրարու եւ Ամերիկեան մայր հայրենիքին կապելու:

ՄԵՆ ՊԱՍԵՐԱԶՄԻՆ ԳԻՆԸ  
ՄԱՐԴՈՒ ԵՒ ԴՐԱՄԻ ՀԱՇԻՒՈՎ

	Բուն պատերազմի ծախք
Մեծն Բրիտանիա	\$34,000,000.000
Յրանսս	23,800,000.000
Ռուսիա	21,500,000.000
Մ. Նահանգներ	13,000,000.000
Իտալիա	} 7,500,000.000
Պելճիբա	
Սերպիա	
Ռումանիա	} 6,000,000.000
Փորթուգալ	
Դաշնակիցներու համադումար ծախքը	\$106,400,000.000
	Բուն պատերազմական ծախք
Գերմանիա	\$29,000,000.000
Աւստրիա-Հունգարիա	
Թուրքիա	
	19,700,000.000
Պուլկարիա	



Կեդր. Պետութեանց համադուժար ծախքը	\$49,200,000,000
Բուն պատերազմական ընդհ. ծախք	\$155,600,000,000
Ստացուածքի կորուստ	\$38,000,000,000
Նաւային կորուստ	2,144,000,000
Դրամական ընդհ. կորուստ	\$195,744,000,000

ՄԵՌԵԱԼ ԵՒ ՎԻՐԱՒՈՐՆԵՐ

Պատերազմի մէջ մեռածներ	8,504,000
Ամբողջ վիրաւորուածներ	25,504,000
Աստղմէ խսպառ անկարողութեան մատնուածներ	6,119,000
Հայ Ազգին բաժինը.....	

ՉՈՒԱՐՃԱԼԻՔ

Հայրը—Բսէ՛, նայի՛մ, տղաս, ծննդեանդ տարեւորձին քեզի ի՞նչ նուէր տամ:  
 Պետրոս—Թմբուկ մը, հայրիկ:  
 Հայրը—Ա՛՛յ, այդ չեղաւ. ա՛լ մինչեւ իրիկուն աղմուկէն ուրիշ բան պիտի չըլլայ տան մէջ:  
 Պետրոս.— Ո՛չ, ո՛չ հայրիկ, խօսք կուտամ որ միայն քնացած ատենդ պիտի զարնեմ թմբուկը:

Հայրը—Տիգրան, լսեցի որ սուտ կը խօսիս, այդ գէշ բան է: Պիտի ընե՞ս նորէն:  
 Տիգրան—Ո՛չ հայրիկ, ալ սուտ պիտի չըսեմ:  
 Հայրը (Դուռը կը զարնեն)—Տիգրան, քնա դուռը բաց, եւ եթէ եկողը հացաւորձ է, ըսէ որ հայրս սուտը չէ:

Մայրը—Յակոբ քեզի խտու աբգիլած եմ Լեւոնի հետ խաղալ, քանզի չար տղայ է:  
 Յակոբ—Շատ լաւ մայրիկ, ուրեմն թող Լեւոն դայ ինձի հետ խաղայ քանզի ես բարի տղայ եմ:

Այրը բժիշկին տարաւ իր շատախօս հիւանդ կինը: Տոբթորը կնոջ բերանը դրաւ ջերմաչափը, ջերմութեան աստիճանը ստուգելու համար:

Այրը իր կնոջ լուութենէն շունչ առած կը դռչէ:

—Տոբթոր, այդ ի՞նչ լաւ գործիք է: Կը խնդրեմ, ըսէ՛ք, քանի՞ դահեկան տամ ատոր.

Պատերազմի տեւողութեան միջոցին՝ Պելճիքացի դիւղացի պատանի մը իր էջը առջեւը ձգած դաշտ կերթար: Գերմանացի զինուորական պաշտօնեայ մը խօսքը ուղղելով

պատանիին ըսաւ. «Իշուդ անունն ի՞նչ է. Ալպէ՞րթ».—«Ո՛չ, Տէր Սպայ», կը պատասխանէ գիւղացին, «Իմ համարուամ շատ բարձր է թագաւորին մասին»։—«Կը յուսամ չես յանդիմիր Բայրը Ուիլիէմ կոչել զայն, այնպէս չէ՞»։—«Ո՛չ, Տէր իմ, համարուամ իշուս մասին ատկէ շատ աւելի բարձր է»։—Կը յարէ պատանին։

Երկու ընկերներ, Մարկոս եւ Ղուկաս, աշխարհին հրաժեշտ տալով իւրաքանչիւրը մեկնեցաւ իրեն սեպականուած վայրը հանդերձելոյն մէջ։

Հոն ժամանելէ քանի մը օր վերջ Ղուկաս հեռաձայնով ուզեց իր ընկերով որպիսու թիւնը հարցնել։

—«Մարկոս, ինչպէ՞ս ես. կը սիրե՞ս նոր բնադաւանող. ինչպի՞սի տեղ է»։

—«Ո՛հ, ընկեր», պատասխանեց Մարկոս, «չիտակը հիանալի տեղ է այս «գոթիք»ը, դորժ չկայ, ո՛չ ալ աշխատանք։ Միակ դրադուժը որ մեզմէ կը պահանջուի, կարմիր եղջիւրներով զգեստներ հագնիլն է. առեան անգամ հնոցին մէջ անուի նետել է կրակը վառ պահելու համար։ Օրը հազիւ ժամ մը կաշխատինք։ Բայց հո՞գ ինչպէս է։

—«Հոս, երկնքի մէջ մեր դորժը ծանր է բաւական։ Առտունաց կանուխ՝ ժամը 4-ին արթննալու է, աստղերը մէկիկ մէկիկ մարելու է, լուսինը ներս առնելու եւ արեւը

անոր տեղը կախելու է, եւ այս ամէնէն վերջըն ալ օրն ի բուն երկինքը գեղազարդելով պարապելու է»։

—«Բայց, ընկեր, ինչպէ՞ս կըլլայ որ ստիպուած էք այդքան ծանր աշխատիլ»։

—«Որովհետեւ հոս դանուողները թուով քիչ են...»։

Ծերակուտականներէն մին օր մը Նախագահ Լինքընի այցելութեան գնաց իր մէկ բարեկամին հետ, որ Յոտը եւ 10 մատ երկայն հասակ ունէր։ Նախագահ Լինքըն ի տես այս բարձրահասակ մարդուն վայրկեան մը ապշեցաւ, բայց վերջէն քաղցրաժրպիտ հարցուց. «Բարեկամ, կուզե՞մ գիտնալ թէ կրնա՞ս զգալ երբ ոտքերդ պաղին»։

Փէդըրիւսքի, հռչակաւոր դաշնակահարը, Պոսթոնի կայարանէն մեկնելու ատեն՝ կօշիկ ներկող տղայ մը հարցուց. «Նե՞րկ»։

«Ո՛չ, տղաս, պէտք չունիմ», ըսաւ դաշնակահարը, որ տեսնելով տղուն աղտոտ երեսը յարեց. «Բայց եթէ մաքրես երեսդ քառորդ մը կուտամ քեզի»։

Տղան երեսը աղէկ մը մաքրած խոյն վերադարձաւ, եւ Փէդըրիւսքի քառորդը երկընցուց անոր։ Տղան շնորհակալութեամբ դրամը առնելէ վերջ զայն վերադարձուց դաշնակահարին ըսելով. «պարոն ատէք այս դրամը եւ ձեր մագերը կտրել տուէ՛ք»։

## ՓՈՔՐԻԿ ԲԱՐՁԻԿԸ

(Արտատպուած

Փոքրիկ բարձի՛կ սիրական,  
Կահուղ՝ գլխուս տակ տըկար,  
Ճերմակ, տաքուկ, սպտուական  
Փետրով լեցուած ինձ համար:

Հովին ձայնէն երբ վախնամ,  
Գայլն ու մրրիկ երբ գոռան,  
Վըրադ ննջել միշտ կուզամ,  
Փոքրիկ բարձի՛կ սիրական:

Կան անթիւ խեղճ մանուկներ  
Մերկ, մայր չունին, չունին տուն,  
Եւ բարձ մ'անդամ չեն դաներ  
Երբ աչքերնին վահէ քուն:

Ո՛հ, դառն բախտ, միշտ քընատ՝  
Կը տառապին երբ այսպէս,  
Անու՛շ մայրիկ, անընդհատ  
Արիւն կ'երթայ իմ սրտէս:

ՏԻԿ. ՏԷՊՕՌՄ ՎԱԼՄՕՌ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԷՋՄԻԱԾԻՆ  
ԳԱԼՍՏԵԱՆ ԱՌԹԻԻ

Փոթորիկն անցաւ, տօնում եմ ահա  
Պայծառ արեւի ծագումն հրաշափառ.  
Աւետեաց հրեշտակն իջաւ մեզ վերայ,  
Եւ նոր առաւօտ բաց է մեզ համար:

Երկար տանջուեցանք. որպէս սեւ գիշեր  
Պաւար էր պատել մեր բերտ սրտերին,  
Վայելենք նոր օր—ահա ջինջ եթեր  
Լցուած է բուրմամբ մի եղեմային:

Վարդերն ինձ այսօր ժպտում են անոյշ.  
Սոխակին դայլայլ հնչում է քաղցրիկ...  
Ա՛խ այս ի՛նչ յոյզ է, որ այսպէս քնքո՛շ  
Շոյում է հողիս, յո՛յզ չընաշխարհիկ:

Մարած է սեւ կիրք լուել է նախանձ.  
«Եղբա՛յր» ձայնում եմ ես իմ թշնամուն...  
Ո՛հ թէ երկնային այս զգացումն անոնց  
Տէր մընար յաւէտ ամենիս հոգուն:

Մի անուն միայն, մի քաղցրիկ անուն  
Թող մեզ բոլորիս շողկապէ սիրով—  
«Հայրի՛կ»... նազելի եւ թովիչ հնչիւն,  
Համակ անհուն սէր եւ համակ գորով:

ՅՈՎ. ՅՈՎ. ՀԱՆՆԷՍԵԱՆ

(Բիւզանդիոն)

## ԹԵՒ ՏՈՒՆԻՔ ՀՈՎԵՐ

Թեւ առէք հովե՛ր, հայրենի հո՛վեր,  
 Իմ հողին ցնցող խապրիկ մ'եմ առեր,  
 Կռունկ, ծիծեռնակ դարձեր են ի բոյն  
 Ես ինչո՞ւ մնամ դարիպ ու անտուն:

Սապրիկ մ'եմ առեր հայրենի երկրէն,  
 Արցունքով օծուն թղթիկ մը իմ մօրմէն,  
 Թէ քոյրերս լացքով իմ ճամբան նային,  
 Իմ փոքրիկ լաճեր կարօտովս հալին:

Կռունկ ծիծեռնակ վաղու՛ց են դարձեր՝  
 Ղարիպ ու դուրպէք ես եմ մնացեր,  
 Չեմ ուզեր ոսկին օտար աշխարհի՛  
 Ուր ախով ու վախով կեանքս կը հասնի:

Դեռ ինչո՞ւ մնամ պանդուխտ ու անտուն,  
 Յերեկ տաժանքով, դիշերներ անքուն,  
 Թեւ առէք հո՛վեր, հայրենի հովեր,  
 Սապրիկ մ'եմ առեր, դարունն է եկեր:

Գարունն է եկեր իմ Հայ աշխարհին՝  
 Դադրեր է կ'ասան հոն հովը գուլմին,  
 Օ՞ն Հայ ընկերներ, ալ ի՞նչ ենք կեցեր՝  
 Թեւ կուտան մեզի հայրենի հովեր:

Բարձր սարերը Մասիս Տաւրոսին՝  
 Դաշտ բլուր հովիտ ծործորք մեր երկրին  
 Հրաւէր կարդան դարիպ Հայերուս  
 Թէ ալ ծագեր է Հայուն արշալոյս:



ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ



Մեր տէրտլի վաքամ, քար ու քանդ վաքամ,  
Միլտը վերաւոր նայի մեր ճամբան,  
Մեռնի՛մ ես անոր սուրբ հողին, ջրին,  
Որ սէր կեանք հաւատք ինձ ներշնչեցին:

Համբո՛յր հողերուն, համբոյր քարերուն,  
Աւեր մեր երկրի աւեր վանքերուն,  
Համբոյր արիւնտ մարգէս գումպուլին,  
Ողջոյն սրտախօս Հայոց պուլպուլին:

Թեւ տուէ՛ք հովեր, հայրենի հովեր,  
Խապրիկ մ'եմ առեր, դարունն է եկեր,  
Դադրեր է կ'ասեն Հայոց աշխարհին  
Մրկող, մրբկող շար հովը գուլմին:

ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

(Կոչնակ)  
Հալէպ

### ՄԵՄ ՄԱՐԴՈՑ ԿԵԱՆՔԻՆ

Երեք տարեկան մատաղ հասակին՝ Յու-  
լիոս Կեսար իր հօրեղբօրը Մարիւսի հետ ձի  
նստած պատերազմի կերթար. Նարոլէոն՝  
խաղալիկ-թողանօթներ կը դործածէր եւ ե-  
րեւակայական բանակներ ճակատամարտ  
կառաջնորդէր. Մեծն Ալէքսանդր՝ իր հօր  
բացակայութեան՝ ընդ առաջ կերթար դես-  
պաններու եւ անոնց հետ կը խօսակցէր. եւ  
Կոմիտիկիոս՝ սրինգ կը զարնէր եւ իր մօր բա-

րեկամներուն հետ որդիական պարտականու-  
թեան մասին կը ճառէր:

Միլտոն իր չորս տարեկան հասակին մէջ  
զրեց կապինքէն աղուոր ոտանաւոր մը: Իր  
հինգերորդ տարիքին մէջ Հաննիպալ իրմէ  
աւելի ծանր սուր մը բռնած Հոռմէացւոց  
դէմ վրէժխնդրութիւն կուխտէր: Սէյնթ-Սա-  
հն Ուալթս կը զբէր, Մօցարթ կը շարագրէր  
եւ կը ջութակահարէր, եւ Տիտիան ծաղիկ-  
ներէ քամուած հեղուկով պատկերներ կը  
նկարէր, երբ տակաւին մանուկ էր: Հքսլի  
աշխարհը յապուշ կրթեց իր հմտութեամբ  
երբ դեռ եօթը տարեկան էր: Կէօթէ դեռ 15  
տարեկան շեղած՝ արդէն սկսած էր ուշա-  
գըրութիւն դրաւել իրը դրող: Էմանուէլ  
Գանթ, «մեծազուռ փոքրիկը», եօթը տա-  
րեկանին կը սորվեցնէր, բայց այնքան «սլոգ-  
տի փաթաթէս» մ'էր որ կ'ստիպուէր սնտու-  
կի մը վրայ բարձրանալ ինքզինքը լսելի Ը-  
նելու, եւ ունկնդրները ակնածանօք կը լսէին  
անոր իրբեւ վարժապետի մը: Մօլթէր թա-  
տերգութիւններ զրեց երբ տասը տարեկան  
էր: Ճան Սթիւարթ Մել իր հինգ տարեկան  
ներն մէջ ուրիշներու լատիներէն ու յունա-  
րէն սխալներ կը սրբազրէր: Հէրպլըթ Սփէն  
սլը իր փոքրկութեան մէջ վարժեցուած էր  
դիտելու: Ճան Ճիսք Կեսար կը կարդար երբ  
դեռ եօթը տարեկան էր, իր ութերորդ տա-  
րեկարձին առթիւ մօրը զրած նամակին մէջ  
կ'ըսէ. «Հիմա ութը տարեկան եմ եւ կար-  
գացած եմ աւելի քան 200 հատոր գիրք ամէն



նիւթի շուրջ, մասնաւորապէս՝ բնական պատ մութիւն, փրկիստիպալուծիւն, ջիմիարանուծիւն, աստղաբաշխուծիւն, քերականուծիւն, մաթեմատիքս եւ սպանիւերէն: Տասն եւ մէկ տարեկանին յունարէն ճառ մը գրեց:

Լորտ Բէլլիւն, մեծահոգի ելեքտրագէտը որուն ասորուան աշխարհը շատ բան կը պարտի, այդան էր Սկոթլանդի փրօֆէսորի մը: Փրօֆէսոր Թճամսընի մասին կ'ըսուի թէ «այն կը հաւատար թէ մանուկ մը պէտք է կրթել երբ նա կսկսի բանական հետաքրքրութիւն յայտնել իր շրջակայ իրերու մասին, եւ կրթութիւնը պարտի ըլլայ մանկան ցոյց տուած միտումներու ուղղութեամբ»: Այս համոզումով այն սկսաւ կըրթել իր երկու տղաքները որորանին մէջ: Բարեկամներ երբ իրեն դիտել տունին թէ այդպիսով կը ծանրարեռնէ տղայոց միտքը անտեղիօրէն եւ հետեւարար պիտի խաթարէ անոնց իմացականութիւնը, փրօֆէսորը պատասխանեց. «փուճ խօսքեր, ընդհակառակը մանկանց կրթութիւնը այնքան ուշ սկսելուն համար է որ անոնք սորվիլը դժուար կը դըտնեն եւ հետեւարար կը ճնեն իրենց միտքը հմտութիւն ձեռք բերելու համար:» Կարելի է այս վաղաժամ կրթութիւնն էր պատճառը որ փրօֆէսոր Թճամսընի երկու տղաքները հոգակաւոր մարդիկ եղան: Մեծ տղան տասընեկու տարեկանին Կլասիօի համալսարանը մտաւ եւ առաջինն հանդիսացաւ իր կարգին մէջ: Ութուուն տարեկան էր երբ մե-

ուաւ մեծ դաստիարակի եւ ճարտարագիտութեան հեղինակի համբաւ մը ձգելով իր ետին: Անոր կրասեր եղբայրը, Լորտ Գալլիւն, աւելի առջ անցաւ: Երբ տասնեւութը տարեկան էր ճանչցուեցաւ իրրեւ գիտական հեղինակութիւն մը՝ Նեւտոնի եւ Ֆարատէյի չափ մեծ:

### Գեղեճի ԲԱՆԳ

Շարլ Ուակնէրի «Պարզ Կեանք»էն

Բարութեան ջիղը արժատ կ'անուէ մարդուն՝ իր անձէն դուրս բան մը սիրելու ընդունակութենէն:

Բարոյական կեանքը իր անձը կառավարելու մէջ կը կայանայ: Անբարոյութիւնը մեր անձերը՝ մեր պէտքերով եւ կիրքերով կառավարելն է:

Արտաքին փայլը կուտ մը չարժեր, պէտք է սիրտը տեսնել:

Թող խօսքն ալ խորհուրդին պէս պարզ ըլլայ, ուղղութեամբ խորհէ, անկեղծութեամբ խօսէ:

Պարզ եւ բնական կեանքն է որ կրնայ սպահովել էութիւն մը՝ կատարեալ իր բովանդակ կորովով:

Պակասամիտ է այն անձը որ կը կարծէ թէ երջանկութիւնը բարեկեցիկ վիճակի մը մէջ է:

Առողջ միտք չունին անոնք որ իրենց ներքին կեանքը կը զոհեն աշխարհասիրութեան:

Բայց ամէն բանէ առաջ հպարտութիւնն է որ արգելք կ'ըլլայ մարդոց՝ համերաշխ եւ ներդաշնակ ոգւով մը ապրելու: Հպարտութիւնը մարդը կ'ընէ ողնի մը, որ չի կըրնար սեւէ մէկուն դպչիլ առանց զանիկա վիբաւորելու:

Գրեթէ ամէն մարդ, հարուստ կամ աղքատ, կ'երեւակայէ թէ հարստութեան մէջ ուրիշ բան չկայ ընելու, բայց միայն ապրիլ անսիրտ ու անգործ կերպով մը: Ասոր համար է որ շատ քիչեր գիտեն հարուստ ըլլալ: Բազմաթիւ մարդոց ձեռքին մէջ հարստութիւնը, Լուսերի զուարթ բայց ահարկու մէկ նմանութեամբ, իշու մը կը զգակներուն մէջի բարին կը նմանի.— զաղափար իսկ չունին թէ ինչպէս պէտք է գործածեն զայն:

Հէշտ կեանք մը կորովը կը մեղկացնէ:

Այն համայնքը, որուն մէջ ամէն ոք միայն իր անձին հանդստութեան հետամուտ է, մխիթարական, կանոնաւոր եւ բարգաւաճ վիճակ մը չի ներկայացնէր:

ԿԱՐԵՒՈՐ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ ՄԵՍ  
ՊԱՏԵՐԱԶՄԷՆ

1914

Յունիս 28—Արքեղուքս Ֆրանսիս Ֆէրտինանտ՝ Աւստրիոյ դահաժառանգը՝ սպաննուեցաւ Սարաճէվոյի մէջ:

Յունիս 5—Գերման կայսեր Պետական Պորհուրը Փոցտամի մէջ պատերազմի որոշում կուտայ:

Յունիս 23—Աւստրիա վերջնադէր կը զրկէ Սերպիոյ:

Յունիս 28—Աւստրիա պատերազմ կը հրատարակէ Սերպիոյ դէմ:

Յունիս 31—Ռուսիա շարժման կը դնէ իր բանակը:

Օգոստ. 1—Գերմանիա պատերազմ կը հրատարակէ Ռուսիոյ դէմ եւ կարշառէ Լիւքսէմպուրի եւ Պելճիքս:

Օգոստ. 3—Գերմանիա պատերազմ կը հրատարակէ Ֆրանսայի դէմ:

Օգոստ. 4—Անգլիա պատերազմ կը յայտարարէ ընդդէմ Գերմանիոյ:

Սեպտ. 6—Մառնի ճակատամարտը, որով Ֆրանսացիք արշաւանքի հոսանքը ետ մղելով ստիպեցին Գերմանները նահանջել մինչեւ էյն:

Նոյ. 5—Անդէրա պատերազմ կը յայտարարէ Թուրքիոյ դէմ եւ Կիպրոսը իրեն կը կցէ:

1915

Յնվ. 28—Անդլիոյ նաւային յաղթութիւնը հիւսիսային ծովուն մէջ Տակկըրի մօտերը:

Փետր. 18—Գերման սուզանաւերը կը սկսին արգելափակել Անդլիա:

Փետր. 19—Անդլո-Ֆրանսական նաւատորմի զը կը սմբակածէ Տարտանէլը:

Մարտ 17—Ռուսեր կը գրաւեն Բրժէ-միժէ:

Մայիս 7—Լուսիթանիա կընկղմի Գերման սուզանաւի մը կողմէ:

Մայիս 23—Իտալիա պատերազմ կը հըրատարակէ Աւստրիոյ դէմ, եւ

Օգոստ. 20—Թուրքիոյ դէմ:

Սեպտ. 28—Թուրքեր կը յաղթուին Քիւթիւլ-Ամարայի մէջ:

Հոկտ. 11—Պուլկարիա Սերպիա կարշաւէ:

Հոկտ. 14—Անդլիա պատերազմ կը յայտարարէ Պուլկարիոյ դէմ:

Դեկտ. 2—Մանասթրի անկումը: Աւըստրոյ-Գերման բանակը Սերպիոյ պարտութիւնը կամբողջացնէ:

1916

Յունվ. 8—Դանակիցները կը պարպեն Կէլիպոլին:

Փետր. 16—Ռուսերը կը գրաւեն էրզըրումը:

Փետր 21—Վէրտօնի ճակատամարտը կսկսի:

Մարտ 10—Գերմանիա պատերազմ կը հրատարակէ Փորթուգալի դէմ:

Ապրիլ 19—Միացեալ Նահանգաց կառավարութիւնը վերջնադիր կը զրկէ Գերմանիոյ սպանաւումի խղի յարարերութիւնները եթէ Գերմանիա չբարեփոխէ իր սուզանաւորու ընթացքը:

Ապրիլ 29—Չորսվար Թաւունսէնդ Քիւթիւլ-Ամարայի մէջ անճնատուր կըլլայ թըրքաց:

Մայիս 31—Ճիւթլէնտի նաւային պատերազմը:

Յուն. 21—Մէքքէյի Մեծ ԾէրիՓը ինքզինք Հիճազի թագաւոր կը հռչակէ:

Յուլ. 1—Սօմի ճակատամարտը:

Օգոստ. 27—Ռումանիա Դանակիցներու կողմը կանցնի: Իտալիա պատերազմ կը հըրատարակէ Գերմանիոյ դէմ:

Սեպտ. 29—Վէնիզէլոս Սելանիկի մէջ յունական Առժամեայ կառավարութիւն մը կը կազմէ:

1917

Յունվ. 31—Գերմանիա սուզանաւային անարդիլ պատերազմ կը ծանուցանէ:

Փետր. 3—Միացեալ Նահանգները իրենց դիւանագիտական յարարերութիւնները կը խղեն Գերմանիոյ հետ:

Փետր. 24—Անդլիացիք կը գրաւեն Քիւթիւլ—Ամարան:

Մարտ 11—Անդլիացիք կը գրաւեն Պաղատաւը:

Մարտ 12—Յեղափոխութիւնը ծայր կուտայ Ռուսիոյ մէջ: Զարը կը հրաժարի դաշին:

Ապրիլ 6—Միացեալ Նահանգներ պատերազմ կը յայտարարէ Գերմանիոյ դէմ:

Յուն. 26—Առաջին Ամերիկեան զօրասոււմբր ցամաք կեննէ Ֆրանսա:

Յուն. 29—Յունաստան պատերազմ կը յայտարարէ Գերմանիոյ դէմ:

Յուլ. 30—Քէրէնսքի նախարարացեալ կը լլայ Ռուսիոյ:

Սեպ. 3—Րիիայի գրաւումը Գերմանիոյ կողմէ:

Նոյ. 7—Քերենսքի կիյնայ. Պօլշեւիկները կառավարութեան դեկը ձեռք կառնեն: Անդլիացիք Ղազան կը գրաւեն Պաղեստինի մէջ:

Նոյ. 9—Իտալացիք Փիէվի գիծը կը յառաջանան:

Սեպտ. 9—Անդլիացիք կը գրաւեն Երուսաղէմը:

Դեկտ. 22—Պօլշեւիկները խաղաղութեան համար կը բանակցին Կեդր. Պետութեանց հետ:

1918

Յունիլ. 8—Նախագահ Ուիլսըն պատերազմի հաշուեյարդարութեան համար տարնեւ չար սկզբունքներ կը ծանուցանէ:

Մարտ 3—Պօլշեւիկները Պրէսթ-Լիդո-վըսքի Դաշինքը կը կնքեն Կեդր. Պետութեանց հետ:

Մարտ 21—Գերմանիոյ Սօմի յարձակումը կսկսի բաժնել Անդլիական եւ Ֆրանսական բանակները:

Ապրիլ 5—Ճարոնական, Ամերիկեան, Ֆրանսական եւ Անդլիական ծովազօրքը Վլատիօթոք ցամաք կեննէ:

Ապրիլ 14—Զօրավար Ֆ. Ֆօշընդհանուր հրամանատար կը կարգուի Դաշնակից բանակներուն:

Մայիս 27—Գերման մեծ յարձակողականը կսկսի եւ կը հասնի մինչեւ Մառն:

Յուն. 6—Ամերիկացիք կը յարձակին Շաթո-Թիէրիի վրայ:

Յուլ. 18—Ֆօշ կսկսի իր հակայարձակողականը Մառնի կողմը:

Օգոստ. 25—Անդլիացիք կը ջախջախեն շինտէնպուրկի գիծը:

Սեպ. 12—Ամերիկացիք Սէյնթ Միհէլի շրջանակը մաքրեցին թշնամիներէն երեք օրուան միջոցին:

Սեպտ. 18—Պուլկարիոյ ճակատը կը փշրի Դաշնակիցներու արշաւանքին առջեւ Մակեդոնիոյ մէջ:

Սեպտ. 22—Անդլիացիք կը յաղթեն Թուրքերը եւ կը գրաւեն Նազարէթը:

Սեպ. 30—Պուլկարիա անձնատուր կը լլայ:



Հոկտ. 1—Դամասկոս կիյնայ Անդլիացուց ձեռքը:

Հոկտ. 20—Գերմանիա Նախագահ Ուելլ-սընի կը դիմէ զինադադարի համար:

Հոկտ. 26—Զօր. Ալէնպի կը դրաւէ, Հալէպը:

Հոկտ. 28—Աւստրիա խաղաղութիւն կու գէ ընդունելով Նախ. Ուիլսընի 14 սկզբունքները:

Հոկտ. 29—Իտալացիք Փիէվի գծէն դուրս կը քշեն Աւստրիացիները:

Հոկտ. 30—Թուրքիա անձնատուր կըլլայ եւ կատարադրէ զինադադարի պայմանները:

Նոյ. 3—Աւստրիա անձնատուր կըլլայ եւ կատարադրէ զինադուլի պայմանները (Նոյ. 4, ժամը 3 Կ. Վ.):

Սերպիացիք կը վերադրաւեն Պելկրաս:

Նոյ. 4—Դաշնակիցներու Պատերազմական Վեհախորհուրդը կը համաձայնի Գերմանիոյ առաջարկուելիք զինադադարի մասին:

Նոյ. 11—2.30 Կ. Ա. Գերմանիա կը կնքէ զինադուլի պայմանները:

## “ՄԻՈՒԹԻՒՆ”

ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՅՈՆԱԿԱՆ ԹԵՐԹ

ԱՄՍՕՐԵԱՅ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԵՑԷՐ

ԲԱԺՆԵԳԻՆ \$ 1 ԿԱՆԻԻԿ

